

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԻՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ ՍԵՐԻԿԻ**

**ՄԻԶՄԵԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԿԱՐՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՋԵՎԱԿՈՐՈՒՄԸ ԱՆՁԼԵՐԵՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ  
ՂԱՍԸՆԹԱՑՈՒՄ**

ԺԳ.00.02-Ղասավանդման և դաստիարակության մեթոդիկա (անգլերեն  
լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների  
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

**Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր**

**ԵՐԵՎԱՆ – 2014**

Ատենախոսության թեման հաստատվել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝	մանկավարժական գիտությունների դոկտոր Ի. Կ. Կարապետյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	բանասիրական գիտությունների դոկտոր Ս.Ք.Գասպարյան մանկավարժական գիտությունների թեկնածու Մ. Ա. Ղարաբյան
Առաջատար կազմակերպություն՝	Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014թ. նոյեմբերի 21-ին ժամը՝ 14<sup>00</sup> -ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի մանկավարժության 065 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Աբովյան 52<sup>ա</sup>, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, թիվ 203 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ. հոկտեմբերի 21-ին:

**Մանկավարժության 065 մասնագիտական  
խորհրդի գիտական քարտուղար,  
մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ՝**

**Ա. Փ. Ղազարյան**

## ԱՏԵՆԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՅԵՏԱԶՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻՎԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. 21-րդ դարում օտար լեզուների ուսուցման և ուսումնառության հետ կապված խնդիրները շոշափում են առանց բացառության բոլոր բնագավառներում մասնագիտացող ուսանողների կենսական շահերը: Ուստի օտար լեզուների դասավանդման արդի մեթոդիկան պետք է ի զորու լինի ժամանակին արձագանքել նոր մարտահրավերներին: Մասնավորապես՝ օրեցօր աճող հեռահաղորդակցական միջոցներից օգտվելու պահանջները պարտադրում են մասնագետներին վերանայել օտար լեզուների ուսուցման թե՛ մոտեցումները, թե՛ սկզբունքները, թե՛ նպատակն ու խնդիրները: Սկզբունքային նշանակություն ունի հատկապես օտար լեզուների մասնագիտական կողմնորոշման ուսուցման նպատակների վերանայումը, քանի որ արդի փուլում խնդիր է դրվում ուսանողին ձևավորել որպես, այսպես կոչված «երկրորդային լեզվակիր», որը նրան հնարավորություն է ընձեռում դառնալ միջնակութային հաղորդակցության ակտիվ մասնակից: Հեռահաղորդակցական իրազեկության զարգացման տեսանկյունից կարևորվում են մի շարք մասնագետների միջնակութային հաղորդակցությանը նվիրված աշխատանքները՝ Մ. Գ. Աստվածատրյան (2000), Բ. Մ. Եսաջանյան (2001), Ի. Կ. Կարապետյան (2007), Ն. Ս. Հայրապետյան (2007), Ի. Ի. Խալեբկա (1989), Ս. Գ. Տեր-Մինասովա (2000) և այլոք:

Հետազոտության մեջ առաջադրված խնդիրների լուծման ընթացքում մեծ դեր են խաղացել մասնագիտական կողմնորոշման դասընթացներին վերաբերող մեզանում իրականացված հետազոտությունները: Հարկ է նշել, որ Ա. Գ. Մանուկյանն ուսումնասիրել է խոսության իրազեկության զարգացման մեթոդական համակարգը (2009), Է. Ա. Հովհաննիսյանն ուսումնասիրել է համակարգային ուսուցման ադապտացիոն մեթոդների կիրառումը հանրակրթական դպրոցում (2008), Ն. Դ. Գրիգորյանը մշակել է բազմաշափանհիշային մոտեցման հիման վրա ուսանողների գիտելիքների գնահատման մեթոդիկան՝ համակարգային գրաֆիկայում (2010), Ա. Կ. Սաղաթեյանն ուսումնասիրել է հեռավար կրթությունը և նրա զարգացման հեռանկարները Հայաստանում (2007), Ռ. Յ. Խաչատրյանը վերլուծել է ուսանողների միջնակութային հաղորդակցության կարողությունների ձևավորման մանկավարժական պայմանները բուհում (2011), և այլն:

Գաղտնիք չէ, որ ժամանակակից տեղեկատվական-հեռահաղորդակցական, մասնավորապես՝ համակարգային միջոցները մեծ հնարավորություններ են ընձեռում ինչպես «վիրտուալ», այնպես էլ իրական միջնակութային հաղորդակցության համար: Փաստորեն, համացանցի միջոցով հեռահաղորդակցումը նոր միջնակութային հաղորդակցման ձև է: Այս առումով միջնակութային հեռահաղորդակցումը դարձել է տարբեր գիտությունների ուսումնասիրության օբյեկտ և նրա բովանդակային և գործառական բնութագրերը դեռևս հետագա բացահայտման անհրաժեշտություն ունեն: Ինչ վերաբերում է օտար լեզուների դասավանդման մեթոդիկային, ապա այդ բնագավառի հետ առնչվող բոլոր մասնագետները համակարծիք են, որ հեռահաղորդակցական ժամանակակից միջոցները մեծ դեր կարող են ունենալ օտար լեզուների դասավանդման գործում:

Ասվածը հիմք ընդունելով՝ հետազոտության արդիականությունը կասկած չի հարուցում, առավել ևս, որ այն համահունչ է ՀՀ կրթական ողջ

համակարգի բարեփոխման ներկայիս բովանդակությանը և պահանջներին: Այդ տեսակետից օտար լեզուների դասավանդման բոլոր մասնագետները և մասնագիտացողները քաջ գիտակցում են, որ այդ բնագավառում անհրաժեշտ է մշակել արդիական հայեցակարգեր, որոնք խթան կհանդիսանան ինչպես ուսումնական նոր ծրագրերի ստեղծման, այնպես էլ կիրառվող մեթոդների, սկզբունքների, միջոցների և ձևերի վերաարժեքավորման ու դրանց նոր տարբերակների մշակման համար:

Անհրաժեշտ է հաշվի առնել այն փաստը, որ օտար լեզուների ուսուցումը մեզանում կազմակերպվում է հաղորդակցման բնական միջավայրի բացակայության պայմաններում, և հեռահաղորդակցական ժամանակակից միջոցներն ինչ-որ չափով լրացնում են այդ բացը: Հենց այդ համատեքստում էլ ատենախոսությունում հետազոտվում է տեխնիկական ուղղվածության բուհերում հեռահաղորդակցական համակարգերի ներդրման հիմնախնդիրը:

Ավելիախտ է, որ արդի փուլում կան բոլոր նախապայմանները հեռահաղորդակցական միջոցներով մասնագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցումը և ուսումնառությունն ավելի արդյունավետ կազմակերպելու համար: Մերօրյա ուսանողների մտավոր կարողությունները և հեռահաղորդակցական հմտությունները հնարավորություն են տալիս համակարգել անգլերենի հեռահաղորդակցական ուսուցման հնարավորությունները տարբեր ոլորտներում, քանի որ նրանցից շատերը շատ լավ օգտվում են համակարգչային ծառայություններից և ի զորու են հաղորդակցվել նաև ապագա մասնագիտության շրջանակում:

Հայաստանի կրթական համակարգը ներկայումս թևակոխում է մի նոր փուլ, այսպես կոչված՝ հետարդյունաբերական, տեղեկատվական ժամանակաշրջան: Դա ենթադրում է բոլոր առարկաների ուսուցման դրվածքի և բովանդակության պարտադիր վերանայում, որի շրջանակում կարևորվում է հեռահաղորդակցական միջոցների կիրառման հիմնախնդիրը մասնագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցման գործընթացում:

Պետք է նկատել, որ հեռահաղորդակցական միջոցների կիրառմամբ օտար լեզուների ուսուցումը նպաստում է սովորողների սոցիալականացմանը, նրանց մեջ զարգացնում բարձր բարոյականային հատկանիշներ, սերմանում հարգանք և սեր տարբեր դիրքի և տարիքի, սոցիալական կարգավիճակի, կրոնական դավանանքի մարդկանց նկատմամբ: Միջմշակութային հաղորդակցության զարգացումն օգնում է սովորողներին հանդուրժողաբար վերաբերվել թե՛ մերձավորներին, թե՛ անժամոթներին և թե՛ օտարերկրացիներին:

Տվյալ հետազոտության արդիականությունը հիմնավորվում է նաև նրանով, որ ՀՀ-ում չեն իրականացվել հեռահաղորդակցական միջոցներով մասնագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցմանը նվիրված համակողմանի ուսումնասիրություններ: Այդ առումով այստեղ կարևորվում է տեխնիկական ուղղվածություն ունեցող բուհում հեռահաղորդակցական համակարգերի ներդրման հիմնախնդիրը:

ՅԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ � ՊԱՏԱԿՆ Է բացահայտել հեռահաղորդակցական նորագույն տեխնոլոգիաների միջոցով անգլերենի ուսուցման առանձնահատկությունները և մշակել դրանց միջոցով սովորողների միջմշակութային հաղորդակցության իրազեկությունը զարգացնող համապատասխան ռազմավարություն և մեթոդական համակարգ:

ՅԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱԾՐ

Եթե մշակվի նորագույն հեռահաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով միջմշակութային հաղորդակցության ուսուցման ռազմավարություն և մեթոդական համակարգ, ապա այն կնպաստի մասնագիտական կողմնորոշման անգլերենի արդյունավետ ուսուցմանը: Սովորողների միջմշակութային հեռահաղորդակցական կարողությունների ձևավորումը կդառնա ավելի արդյունավետ, եթե հաշվի առնվեն միջմշակութային հեռահաղորդակցության առանձնահատկությունները և ուսուցման գործընթացում կիրառվեն մասնագիտական կողմնորոշման բնագրեր և վիրտուալ խոսույթներ:

Այսպիսով, որպես առաջադրվող մեթոդական համակարգի արդյունավետության նախապայման հանդիսանում է այն, որ մասնագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցման կարևոր և հիմնական միավոր դիտվում է ոչ միայն տեքստը, այլև հեռահաղորդակցական խոսույթը, որին հաջորդող և նախորդող վարժությունների հիմքում ընկած են խոսքային և ոչ խոսքային հաղորդակցություն զարգացնող տարբեր բնույթի խոսույթաստեղծ կադապարները:

ՅԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ օտար լեզուների ուսուցումն է հեռահաղորդակցական նորագույն տեխնոլոգիաների միջոցով:

ՅԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐՎՐԿԱՆ միջմշակութային հաղորդակցական իրազեկության զարգացումն է հեռահաղորդակցական նորագույն տեխնոլոգիաների միջոցով մասնագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցման գործընթացում:

ՅԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՅԱԴԻՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ուսումնասիրել հեռահաղորդակցական նորագույն տեխնոլոգիաների միջոցով օտար լեզուների ուսուցմանը վերաբերող մեթոդական գրականություն:
- Համեմատել խոսքային և ոչ խոսքային հաղորդակցության ձևավորման հոգեբանամանկավարժական պայմանները և մշակել համապատասխան ռազմավարություն, ինչպես նաև հեռահաղորդակցական նորագույն տեխնոլոգիաների շարունակական ներդրման և կիրառման մեթոդական համակարգ:
- Ստեղծել անգլերենի հեռահաղորդակցական ուսուցման նախագծային օպտիմալ մոդել և հիմնավորել միջմշակութային հեռահաղորդակցության կարողություններ և հմտություններ ձևավորող մեթոդական համակարգը:

ՅԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ հիմքում ընկած են օտար լեզուների ուսուցման ոլորտում հայրենական և արտերկրի հեռահաղորդակցական նորագույն տեխնոլոգիաների կիրառմանը վերաբերող մոտեցումները և հայեցակարգերը, մասնավորապես՝ նախագծային մեթոդիկան, խոսույթի վերլուծության և ուսուցման տեսությունները, օտար լեզուների ուսուցման իրազեկային մոտեցումը, մասնավորապես՝ Թ. Հաչինսոնի (T. Hutchinson) մասնագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցման, ճանաչողական, հեռանկարային, մասնագիտական պահանջմունքների վերլուծության, Յեկհաուզենի (Хекхаузен) դրդապատճառների, Հորնբու (Hornby) իրադրային մոտեցման, Օբերգի (Oberg) մշակութային ցնցման տեսությունները:

ՅԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

- թեմային առնչվող լեզվաբանական, մեթոդաբանական և մեթոդական գրականության վերլուծություն,

- նորագույն հեռահաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման, նախագծերի, ուսումնական նպատակներով համացանցի միջոցով մասնագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցման, ուսումնական նախագծերի ծրագրավորում և կիրառում,
- ուսանողների նախագծային աշխատանքի անմիջական դիտարկում,
- նախնական վարկածի և առաջարկվող մասնագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցման կադապարի փորձարարական ստուգում և հիմնավորում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆԵՐ

այն է, որ ուսումնասիրվել են հեռահաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկությունները և մշակվել է մասնագիտական կողմնորոշման անգլերենի հեռահաղորդակցական իրազեկության ձևավորման և զարգացման նոր մեթոդական համակարգ, ըստ որի՝ նախագծային մեթոդն առանցքային դեր է խաղում անգլերենի ինտերակտիվ ուսուցման համակարգում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- ներկայացվել է էլեկտրոնային, հեռահաղորդակցական անգլերենի ուսուցման հարմարման մոդելն անհատական և խմբային նախագծերի շրջանակներում,
- հիմնավորվել է հեռահաղորդակցական տարբեր խոսույթների հետ աշխատանքի ուսումնական մոդելը,
- ստեղծվել է նախագծային մեթոդիկայի շրջանակներում ձևավորված հեռահաղորդակցական նորագույն տեխնոլոգիաների կիրառման անգլերենի ուսուցման մեթոդական համակարգ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտության արդյունքները կարող են հիմք ծառայել վիրտուալ բնագրային տեքստեր ընտրելու և նրանց հետ աշխատելու վարժությունների համակարգի մշակման, ինչպես նաև անգլերենի դպրոցական և բուհական նոր դասընթացների կազմակերպման, դասագրքերի, ձեռնարկների ստեղծման, կոնկրետ ծրագրերի կազմման, դասերի պլանավորման ու իրականացման համար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Առաջին փուլ (2007-2008):

Առաջին փուլում ուսումնասիրվել է հեռահաղորդակցական նորագույն տեխնոլոգիաների կիրառմանը վերաբերող մանկավարժական, մեթոդական գրականություն: Կոնկրետացվել են հետազոտության խնդիրները, ձևակերպվել է նպատակը, առաջադրվել է հետազոտության վարկածը, մեթոդները, փորձարարական ուսուցման փուլերը:

Երկրորդ փուլ (2009-2010):

Կոնկրետացվել է փորձարարական ուսուցման մասնակիցների թվաքանակը, կազմվել են համապատասխան հարցաշարեր, վերլուծվել են հեռահաղորդակցական տեխնոլոգիաներին վերաբերող դասագրքեր, իրականացվել է փորձարարական ուսուցում:

Յրրորդ փուլ (2010-2011):

Փորձարարական ուսուցման արդյունքները վերլուծվել են համեմատական կտրվածքով: Ներկայացվել են նախագծային աշխատանքի վերջնարդյունքները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱԿՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ապահովվում է թե՛ տեսական դրույթների

գիտականությամբ, թե՛ իրականացված փորձարարական ուսուցման դրական արդյունքներով, դրանց ապացուցելիությամբ, հուսալիությամբ, առաջադրված վարկածի հաստատմամբ:

ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ.

Աշխատանքն ամբողջությամբ քննարկվել ու հավանության են արժանացել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի օտար լեզուների և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում, ինչպես նաև Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Վանաձորի մասնաճյուղում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԸ

Հետազոտության արդյունքները ներդրվել են Երևանի ճարտարապետական համալսարանում: Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են չորս հոդվածներում (տես անվանացանկը ատենախոսության սեղմագրի վերջում):

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

1. Նորագույն հեռահաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հնարավորություն է ընձեռում ստեղծելու բնական լեզվական միջավայր միջնշակութային հաղորդակցության համար: Ուսանողները շատ արագ և կարճ ժամանակահատվածում ձեռք են բերում որոշակի կարողություններ օտարալեզու մասնագիտական տեքստերը համացանցում փնտրելու, գտնելու, թարգմանելու, էլեկտրոնային թղթապանակներ կազմելու, իրենց աշխատանքի արդյունքը գնահատելու համար:
2. Հեռահաղորդակցական ժամանակակից միջոցներից օգտվելու ընթացակարգերի ճիշտ մշակումը հնարավորություն է ընձեռում ժամանակին և արագ կանխարգելել, հաղթահարել մշակութային, միջնշակութային բնույթի սխալները, որը նպաստում է ոչ միայն ուսումնասիրվող օտար լեզվի գրական, խոսակցական, այլև գիտական բառապաշարի յուրացմանը:
3. Սովորողների միջնշակութային հաղորդակցական իրազեկության ձևավորումն ավելի արդյունավետ է դառնում, եթե անգլերենի ուսուցման գործընթացը կազմակերպվում է հեռահաղորդակցական նախագծերի մեթոդի միջոցով, քանի որ այն նպաստում է բնական լեզվական միջավայրի վերարտադրմանը կամ ստեղծմանը:
4. Մասնագիտական կողմնորոշման բառապաշարի ուսուցումն արդյունավետ է վիրտուալ խոսույթի, գերտեքստերի միջոցով, քանի որ դրանք ներկայացնում են մասնագիտական կողմնորոշման տերմինները, նեղ մասնագիտական բառապաշարը: Մյուս կողմից՝ դրանք ներկայացնում են լեզվակիր ճարտարագետների ամենօրյա խոսքի ազգամշակութային առանձնահատկությունները, ինչպես խոսքային վարվեցողության բառերը, արտահայտությունները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ ԵՎ ԾԱՎԱԼԸ.

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, գծապատկերներից, աղյուսակներից, բնագիր տեքստերից և հավելվածներից: Աշխատանքի ծավալը 145 համակարգչային էջ է:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

**Առաջին գլխում`** «Հեռահաղորդակցական միջոցների և տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկությունները մասնագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցման գործընթացում», քննության են առնվում միջնակուսարարական հեռահաղորդակցական կարողությունների ձևավորման մանկավարժական պայմանները:

**Առաջին** «Միջնակուսարարական հեռահաղորդակցական կարողությունների ձևավորման բովանդակային և գործառական բնութագրերը» **ենթագլխում** բացահայտվում են միջնակուսարարական հեռահաղորդակցական կարողությունների ձևավորման առանձնահատկությունները:

Նշվում է, որ ճարտարագիտությունը որպես մասնագիտություն ընտրած ուսանողներն ավելի լավ են օգտվում ժամանակակից հեռահաղորդակցական միջոցներից: Հաշվի առնելով հետազոտության նպատակն ու խնդիրները՝ առանձնացվում են վիրտուալ հաղորդակցության ժամանակակից միջոցները: էլեկտրոնային փոստ (e-mail), միջնակուսարարական ֆորումներ, համացանցային զրույցներ (chats), Ինտերնետ պեյջերներ կամ ակնթարթային տեղեկատվության փոխանցման կլիենտներ (IM Clients), IP-հեռախոսագրում, տեսագիտաժողով, բլոգ:

Կարևորվում է այն, որ հեռահաղորդակցական անգլերենի ուսուցումն ու ուսումնառությունը կազմակերպելիս պետք է հաշվի առնել համաեվրոպական լեզվական քաղաքականության հիմնադրույթները:

Նշվում է, որ «միջնակուսարարական հաղորդակցություն» եզրույթի կարևորագույն բաղադրամասը հաղորդակցությունն է: Այդ համատեքստում վերլուծվում և սահմանվում են «շփում», «սոցիալականացում», «մասնագիտական կողմնորոշման շփում», «հաղորդակցություն», «խոսքային գործունեություն», «մշակույթ», «քաղաքականություն» հասկացությունները:

Համեմատական կտրվածքով բացահայտվում է, որ եթե անգլերենի ուսուցման մասնագիտական դասընթացում շեշտը դրվում է մշակույթների երկխոսության ուսուցման վրա, ապա մասնագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցման դասընթացները պետք է կոնկրետացնեն նեղ մասնագիտական մշակույթի շրջանակներում տվյալ ենթալեզվի ուսուցման խնդիրները:

Կարևորվում է այն փաստը, որ մշակույթային շփումը հեռավորության վրա կամ հեռահաղորդակցական միջոցներով տարբերվում է այն շփումից, որը տեղի է ունենում բնական պայմաններում: Մասնագիտական շփման «մշակույթի» ձևավորման կարևոր գործոն է ոչ միայն տվյալ մշակույթը, մասնագիտական շփման մշակույթը, այլև այսպես կոչված «աշխարհի պատկերը»: Մեթոդաբանները խնդիր են դնում համապատասխան դասընթացի շրջանակներում ձևավորել «երկրորդային լեզվական անձ»:



Ատենախոսության **երկրորդ** «Հեռահաղորդակցական նախագծերի կիրառումը մասնագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցման գործընթացում» **ենթապլանում** ներկայացվում են հեռահաղորդակցական նախագծերի կիրառման առանձնահատկությունները տեխնիկական բուհում: Նշվում է, որ ուսուցման նախագծային մեթոդն անձնակողմնորոշիչ մոտեցման գործնական արտահայտություններից մեկն է: Այն ենթադրում է հանձնարարությունների համագործակցային կատարում: Այն զարգացնում է սովորողների ստեղծագործական կարողությունները:

ՀՊՃՀ- ի Պ. Սելբոնյանի անվան Վանաձորի մասնաճյուղի մի քանի ֆակուլտետներում անցկացվում են անգլերենի նախագծային դասեր: Թե՛ մեքենաշինության, թե՛ քիմիական ֆակուլտետներում նախագծային աշխատանքները բաժանվում են երեք փուլի: Առաջին փուլում նախագծային աշխատանք իրականացնող բոլոր խմբերն ուսումնասիրում են հեռահաղորդակցական Across cultures նախագիծ, որը վերաբերում է անգլախոս երկրների և Հայաստանի կյանքին, տնտեսության տարբեր ոլորտներին: Երկրորդ փուլը վերաբերում է անգլախոս երկրների քիմիական արդյունաբերությանը: Իսկ երրորդ փուլը Հայաստանի քիմիական արդյունաբերությանը և նրա զարգացման հեռանկարներին:

Հիմնավորվում է քիմիական արդյունաբերության զարգացման դերը միջնաշխույթային հաղորդակցության գործում ընդհանրապես: Այդ համատեքստում շեշտադրվում է կոնկրետ քիմիական բաղադրություն ունեցող հազուատների պատրաստման նշանակությունը համամարդկային նյութական և հոգևոր արժեք ներակայացնող նորածնությունների տարածման գործընթացում:

Նախագիծը կարող է լինել երկարաժամկետ, լայնածավալ, ինչպես նաև կարճաժամկետ՝ ներառել մի լսարանային պարապմունք: Նշվում է, որ ամեն մի լավ կազմակերպած նախագիծ եռափուլ է:

Նախապատրաստական փուլում կարևորվում է դրդապատճառի, նպատակադիրքորոշման և պլանավորման դերը: Այդ փուլում որոշվում է թեման, սահմանվում է հիմնախնդիրը, ճշգրտվում են վերջնական արդյունքները և նպատակները: Այնուհետև ընտրվում է աշխատանքային խումբ, տվյալ թիմի կամ խմբի մեջ բաշխվում են դերերը: Որոշվում են տեղեկատվության սկզբնաղբյուրները, նրա հավաքման և վերլուծության եղանակները: Նախապատրաստական փուլում սովորողները ճշգրտում են տեղեկատվությունը, քննարկում են հանձնարարությունը, հստակեցնում են խնդիրները, առաջարկում են տվյալ խնդիրները լուծելու եղանակները, կատարում են դերաբաշխում, որոշում են տեղեկատվության աղբյուրները:

Հիմնական փուլում սովորողները որոշումներ են ընդունում: Բովանդակային առումով, կարևորվում է նախագծի իրականացման եղանակների քննարկումը /մտազրոհ/, լսարանի նպատակադիրքորոշումը, արդյունքների ներկայացման եղանակի որոշումը և տեղեկատվության հավաքումը՝ հարցազրույց, հարցում, դիտում, գիտափորձ: Հեռահաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման տեսանկյունից կարևոր է անգլերենի և մասնագիտական առարկաների ինտեգրատիվ ուսուցումը, օրինակ ինֆորմատիկա և ծրագրավորում առարկաները: Բուն

ծրագրավորման լեզվի ուսուցումը ենթադրում է ինֆորմատիկայի և անգլերենի լավ կամ բավարար իմացություն<sup>1</sup>:

Նախագծային աշխատանքը օգնում է ուսանողներին տնտեսել իրենց ժամանակը ոչ միայն դասերի, այլև արտասարանային կամ ինքնուրույն աշխատանքի ժամանակ:

**Երրորդ ենթագլխում՝** «Հեռահաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը մասնագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցման գործընթացում» ներկայացվում են հեռահաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման նախադրյալները և հնարավորությունները մասնագիտական կողմնորոշման անգլերենի դասընթացում:

Նախագծային մեթոդով աշխատելու գործընթացում կարևորվում է ոչ միայն «Վեբ-որոնում» (Web-Quest) մեթոդի կիրառումը, այլև այն, որ ուսանողները իրենք ստեղծեն վեբ-որոնման էջեր:

Վեբ-որոնման հիմնական բաղադրիչների վերլուծությունը ցույց է տալիս, որ այն կարևոր պայման է հեռահաղորդակցական կարողությունների զարգացման համար մասնագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցման տարբեր փուլերում:

Նրանք պետք է ընդհանուր պատկերացում ունենան blog, diary, e-mail newsletters, RSS feeds, Podcasts, authentic texts, concordancer, electronic feedback, electronic translators, e-lessons, PEDs (portable electronic dictionaries), POLL (partially online language learning), Powerpoint presentations, synchronous communication video-conferences, virtual learning environment, Wikipedia, Internet Classroom Assistent, multimedia materials և դրանց առնչվող այլ տերմինների և տերմինակապակցությունների մասին: Մասնագիտական ենթալեզվի ուսուցման տեսանկյունից կարևորվում են վեբ տեխնոլոգիաները, քանի որ նշված տեխնոլոգիաների կիրառումը բերում է ուսուցման անհատականացման և տարբերակման, երբ ուսուցման բոլոր փուլերում հաշվի է առնվում ուսանողների անհատական առանձնահատկությունները:

Համացանցային ռեսուրսների կիրառումն անգլերենի դասին հնարավորություն է ընձեռում դասավանդողին աշխատանք իրականացնել բառապաշարի, արտասանության, մենախոսական, երկխոսական, գրավոր խոսքի զարգացման ուղղությամբ:

Տեխնիկական բուհի ուսանողները կարող են մասնակցել չաթերի, տեսագիտաժողովների, նամակագրական կապ հաստատել իրենց հասակակիցների հետ:

Հաջորդ փուլում սովորողները ծանոթանում են տեսաժողովը՝ ուսուցողական նպատակներով կիրառելու առանձնահատկություններին: Հնարավորություն է ստեղծվում հաղորդակցվել իրական ժամանակում ուրիշների հետ տեսակապի կամ լսակապի միջոցով: Կապ հաստատելով որևէ երկրի տեխնիկական բուհի համակուրսեցիների հետ՝ սովորողները կարող են

---

<sup>1</sup>Վարդգես Հովսեփյան, Ծրագրավորման լեզու. - Եր.:ՎՄՎ-Պրինտ, 2007. -288էջ:

հաղորդակցվել ինչպես ուսանող-ուսանող, այնպես էլ դասախոս-դասախոս, ուսանող-դասախոս ռեժիմներում:

Բլոգը weblog բառի կրճատված ձևն է: Այն օնլայն-ներքանցային ամսագիր կամ օրագիր է: Բլոգը բաղկացած է տարբեր պոստերի կամ մուտքերի ժամանակագրական ցանկից: Ուսանողները հիմնականում կարողանում են ստեղծել իրենց բլոգները: Կարևորն այն է, թե ինչ նպատակով են դրանք ստեղծվում: Նախնական շրջանում նպատակահարմար է ստեղծել բլոգերների թիմ, որը բաղկացած է նույն խմբի ուսանողներից, որոնք հետագայում կարող են կապվել այլ երկրների բլոգերներին:

Փողքաստի առավելություններից մեկն այն է, որ այն ծառայում է նաև ինքնուսուցմանը: Վիկիների կիրառման առավելությունն այն է, որ մեկի գրածը կարող են խմբագրել ուրիշները, և դու կարող ես խմբագրել ուրիշներին: Նպատակահարմար է դա անել նույն ուսումնական խմբի շրջանակներում, երբ նույն թեմայի շուրջ ուսանողները ստեղծում են տեքստեր և խմբագրում են միմյանց:

Հետազոտության մեջ մեծ տեղ է հատկացվում ասպես կոչված հեռահաղորդակցական հրահանգների ուսուցմանը: Սովորողները պետք է կարողանան կատարել դասախոսի հրահանգները՝ շփվել telnet -ի միջոցով, մտնել connect guest երկխոսական բնակարան:

Ատենախոսության մեջ վերլուծության է ենթարկված Օ. Ա. Կիտմանովայի աշխատանքը, որն իր հետազոտության մեջ բերում է հրահանգների հետևյալ ցանկը.

- @who – ներկայացնում է ներկաների ցանկը,
- @join xxx – xxx սենյակը մտնելու համար,
- @go xxx – սենյակների մեջ մտնելու համար,
- look – սենյակի տեսքը,
- say xxx – հաղորդագրությունը հայտնելու համար,
- :xxx - գործողությունների և զգացմունքների հաղորդման համար,
- @quit - MOO դուրս գալու համար,
- help - MOO-ի միջոցով դուրս գալու համար:

Նշվում է, որ հեռահաղորդակցական կողմնորոշման նվազագույն բառապաշարի ուսուցման տարբեր փուլերում կարևորվում է հեռահաղորդակցական հրահանգների ուսուցումը ոչ միայն անգլերենի, այլև մասնագիտական առարկաների ուսուցման գործընթացում: Դա ենթադրում է համապատասխան ինտեգրատիվ դասմիավորների մշակում, տեխնիկական և հումանիտար կողմնորոշման դասընթացների ծրագրերի փոխհամաձայնեցում:

Հաջորդ **ենթագլխում** ներկայացվում է «Միջմշակութային հեռահաղորդակցական կարողությունների ձևավորման կադապարը», որի բաղադրիչներն են ինչպես ուսուցման, այնպես էլ գնահատման տեխնոլոգիաների կիրառումը: Շեշտադրվում է այն գաղափարը, ըստ որի՝ օտար լեզվի ուսուցումը չի կարող լինել ամբողջական, եթե գնահատման ընթացակարգերը չեն վերածվում ինքնագնահատման ընթացակարգերի:

Ուսուցման մեջ մեծ տեղ է հատկացվում պորտֆոլիոյի կիրառմանը, որն ունի «Լեզվի կենսագրություն», «Անձնագիր» և «Դույտ» բաժինները:

«Լեզուներ» բաժինը օժանդակում է բացահայտել պորտֆոլիո վարողի լեզվական կարողությունները, նրա իրազեկությունը լեզվին և առնչությունը մշակութային կյանքին: Առաջարկվող մեթոդիկայում թղթապանակը օգտագործվում է դասընթացի ժամանակ յուրացրած ամբողջ տեսական և գործնական նյութը հավաքելու, հասկանալու, համակարգելու և ամփոփելու համար:

Հիմնավորվում է, որ թղթապանակի միջոցով հնարավոր է դառնում իրականացնել գնահատում և ինքնագնահատում ուսանողների առաջադիմության, գնահատման համակարգի և, ամենակարևորը, թեմայի յուրացման մասին: Կարևորն այն է, որ էլեկտրոնային թղթապանակը նպաստում է սովորողների ստեղծագործական կարողությունների շարունակական զարգացմանը:

**Երկրորդ գլխում** «Միջմշակութային հեռահաղորդակցական կարողությունների ձևավորման ընթացակարգերը և առաջադրվող կադապարի փորձարարական հիմնավորումը» հիմնավորվում է հեռահաղորդակցական միջոցների մասնագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցում կադապարը:

**Երկրորդ գլխի առաջին ենթագլխում** «Բնագրային տեքստերի ընտրության հիմնախնդիրը անգլերենի մասնագիտական կողմնորոշման հեռահաղորդակցական դասընթացում» ներկայացվում են ուսուցողական նպատակներով տեքստերի ընտրության և ուսուցման սկզբունքները: Նշվում է, որ տեխնիկական բուհում ուսանողները հիմնականում ուսումնասիրում են ուսումնական մասնագիտական կողմնորոշման տեքստեր, որոնցում բառապաշարի կարևորագույն մաս են կազմում մասնագիտական տերմինները:

Հեռահաղորդակցական բնագրեր ընտրելիս հաշվի են առնվում սովորողների մասնագիտական կողմնորոշման բառապաշարի, հեռահաղորդակցական տերմինաբանության և անգլերենի առօրյա-խոսակցական բառապաշարի առանձնահատկությունները: Ներկայացվում և սահմանվում են «վիրտուալ խոսույթ», «կրեոլային տեքստ», «գերտեքստ», «խոսույթ» հասկացությունները:

Ուսուցողական նպատակներով կարևորվում է հատկապես վիրտուալ խոսույթը, որը ոչ միայն ներկայացնում է տեքստը տարբեր տեսանկյուններից, այլև օգնում է այն հասկանալ: Նշվում է, որ օտար լեզուների ուսուցման հեռահաղորդակցական մոտեցման հայեցակարգը նպաստում է ավանդական ուսուցման միավորների վերագնահատմանը:

**Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում** «Մասնագիտական կողմնորոշման բառապաշարի ընտրության և ուսուցման հիմնախնդիրը հեռահաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացում», ներկայացվում են մասնագիտական կողմնորոշման բառապաշարի ընտրության սկզբունքները, յուրացման մեթոդներն ու հնարները հեռահաղորդակցական կարողությունների ձևավորման տեսանկյունից: Նշվում է, որ ժամանակակից անգլերեն խոսակցական, գրական բառաշերտերը մեծ ազդեցություն ունեն մասնագիտական կողմնորոշման անգլերենի բառապաշարի ձևավորման վրա:

Հաշվի են առնված հատկապես նախագծերի «Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգի» շրջանակներում մշակված բառապաշարի ընտրության սկզբունքները և յուրացման հիմնական մասնավորապես B2. և B1. մակարդակները: Ըստ B2 մակարդակի՝ սովորողը «բավականին լավ բառապաշար ունի իր հետաքրքրությունների շրջանակում ընդհանուր թեմաների շուրջ խոսելու համար: Կարող է վերածնակերպել մտքերը՝ կրկնություններից խուսափելու համար, սակայն երբեմն անվստահ է և երբեմն էլ դիմում է երկարաբանությունների:


Ըստ B1 մակարդակի, սովորողը «բավարար բառապաշար ունի՝ իր առօրյա կյանքին վերաբերող այնպիսի թեմաների շուրջ մտքեր արտահայտելու համար, ինչպիսիք են ընտանիքը, սիրելի զբաղմունքը և հետաքրքրությունները, աշխատանքը, ճանապարհորդությունը և ընթացիկ իրադարձությունները, թեև խոսում է որոշ անվստահությամբ և դիմում է երկարաբանությունների: Բավարար բառապաշար ունի ամենօրյա հաղորդակցության և առօրյա գործերը վարելու համար՝ ներառյալ ծանոթ իրավիճակներն ու թեմաները: (Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ, 2005, 129):

Նշվում է, որ հեռահաղորդակցական կողմնորոշման նվազագույն բառապաշարն ընտրելիս անհրաժեշտ է ուսուցման միավոր համարել ոչ միայն տեքստը, խոսույթը, այլև գերտեքստը և վիրտուալ խոսույթը: Նշված ուսուցման միավորները աչքի են ընկնում նրանով, որ հարուստ են մեծ քանակությամբ նորաբանություններով, նորաբանություն-տերմիններով, դիպվածային և ներգոր բառապաշարով:

Համեմատական կտրվածքով վերլուծվում են տերմինները և իրույթները, հաշվի առնելով դրանց ընկալման, յուրացման, թարգմանության, ընդհանուր առմամբ, հեռահաղորդակցական միջոցներով սովորեցնելու առանձնահատկությունները: Կարևորվում է հեռահաղորդակցական հասկացույթների ընտրության և դրանց միջոցով տերմինների և իրույթների ուսուցման հիմնախնդիրը տեխնիկական բուհում:

Գծապատկեր 1.

Հեռահաղորդակցական կողմնորոշման նվազագույն բառապաշարի բաղադրիչները



Սահմանվում են «իրոյթ» և «տերմին» հասկացությունները, առ այն, որ տերմինները կիրառվում են նախ և առաջ գիտական գրականության մեջ: Իրոյթները, հակառակը, կիրառվում են գեղարվեստական գրականության մեջ, ընդ որում ոչ միայն ոճական նպատակներով, այլ նաև ազգային, տեղական և պատմական կոլորիտը վերստեղծելու նպատակով:

Նշված բառապաշարի ուսուցման համատեքստում համակարգչային-հեռահաղորդակցական նորաբանությունները հստակորեն ցույց են տալիս տվյալ ոլորտի զարգացման միտումները: Պատահական չէ, որ շատ համակարգչային-հեռահաղորդակցական տերմիններ, հասկացություններ մինչև հիմա իրենց համարժեքը չունեն հայերենում: Դրանք կամ պատճենահանվում են կամ փոխառվում համապատասխան գրադարձման կանոններով:

accessory – լրասարք, պարագա, ակսեսուար, սարքավորում, պիտույք  
ADC (Analog-to-Digital Converter) - անալոգայինից /նմանակայինից/  
թվայինի փոխարկող /սարք/

animation – համակարգչային շարժապատկերում, անիմացիա, կենդանացում<sup>2</sup>:

Մասնագիտական կողմնորոշման անգլերենի բառապաշարի կարևորագույն մաս են կազմում կադապարային, կարծրատիպային միավորները:

Արվում է հետևություն, որ անգլերեն հեռահաղորդակցական ենթալեզուն ոճական առումով աստիճանաբար մերձենում է առօրյա-խոսակցական լեզվին:

Հեռահաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման ունակությունը ենթադրում է ուսուցման անձնակողմնորոշիչ կադապարի իրացում:

Ինչ վերաբերում է տեխնիկական բուհում կիրառվող դասագրքերին, ապա դրանք հիմնականում նախատեսված են ռուսալեզու լսարանի համար, և դրանցում հաշվի չեն առնված հայախոս ուսանողների առանձնահատկությունները, Հայաստանի պատմամշակութային, տնտեսական, արդյունաբերական իրողությունները:

Ինչ վերաբերում է քիմիական տերմինների, բառակապակցությունների ուսուցմանը, ապա ՀՀ-ում չեն իրականացվել լեզվաբանական հետազոտություններ, որոնք վերաբերում են քիմիական տերմինների լեզվաբանական առանձնահատկությունների բացահայտմանը: Քիմիական տերմինների ուսուցումը դժվարանում է նախ և առաջ նրանով, որ ամեն օր նորանոր տերմիններ են մտնում գիտական շրջանառության մեջ: Վեբ կամ համացանցային տեխնոլոգիաների կիրառումն այդ պարագայում ոչ միայն նպաստում է մասնագիտական կողմնորոշման բառապաշարի ուսուցմանը, այլև դառնում է պարտադիր պայման, քանի որ բազում նոր տերմիններ, հասկացություններ հնարավոր չէ ֆիքսել բառարաններում կամ համապատասխան գիտական տեղեկատուներում: Համացանցն այդ

<sup>2</sup>Անգլերեն-հայերեն համակարգչային և մաթեմատիկական տերմինների գործնական բառարան

հնարավորությունն ընծեռում է թե՛ էլեկտրոնային, համացանցային բառարանների և, թե՛ վիրտուալ խոսույթների մատչելիության տեսանկյուններից:

Գիտական, տեխնիկական գրականության ուսուցման ժամանակ կարևորվում է սպասարկու բառերի ուսուցումը, որոնք տրամաբանական կապ են ստեղծում արտահայտության առանձին տարրերի միջև: Դրանք կապերն են՝ on, upon, in, after, before, apart (aside) from, except (for), save, in addition (to), according to, because of, by means of, in accordance with, in regard to, in this connection, whether... or (not) և այլն:

Կարևորվում է նաև մակբայների ուսուցումը՝ however, also, again, now, thus, alternatively, on the otherhand, որոնցմիջոցով ուսանողները կարող են տրամաբանորեն ճիշտ արտահայտվել: Նույնը վերաբերում է գիտական բառակապակցություններին և տերմինակապակցություններին:

Տեխնիկական բուհում մասնագիտական կողմնորոշման բառապաշարի ուսուցման արդյունավետ եղանակ է նաև սպասարկու բարդ կառույցների ավելի պարզ կառույցներով փոխարինումը:

Despite the fact that (-although), resembling in nature (-like), in some instances (-sometimes), to make an attempt (-to try), to reach a decision (-to decide), signed an agreement providing for (-agreed to) և այլն:

Տեխնիկական բուհում արդյունավետ է բառապաշարն ուսուցանել քերականության հետ միասին, այն առումով, որ քերականական երևույթի յուրացումը նպաստում է համապատասխան բառապաշարի յուրացմանը: Օրինակ տրվում է անհաշվելի գոյականներից առաջ հողի ուսուցման կանոնը և բերվում են օրինակներ՝ water, sand, light, air, work, gas, steam, ice, blood, tar

Ուսանողները սովորում են ոչ միայն որոշյալ և անորոշ հոդերի կիրառման առանձնահատկությունները, այլև տված բառերը:

Օրինակ՝ oxidation, deformation, tension, polygonisation, rotation, detection, description, attention, reaction և այլն:

Արվում է եզրահանգում այն մասին, որ տերմինները և նորագույն հասկացությունները, նորաբանություններն ուսումնասիրության համար դժվարություն են ներկայացնում անկախ այն բանից, թե դրանք ինչ լեզվով են ուսումնասիրում: Այդ տերմինները և հասկացությունները ներկայացնում են ոչ միայն բուն մասնագիտական, համագիտական, հեռահաղորդակցական բառերը և հասկացությունները, այլև այն արտահայտությունները, որոնք կիրառվում են տվյալ մասնագիտական ոլորտում:

Հեռահաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը օտար լեզվի ուսուցման գործընթացում նպաստում է բոլոր նշված բառաշերտերի յուրացմանը: Հաշվի առնելով վիրտուալ խոսույթի ոճաժանրային առանձնահատկությունները, բացահայտվում են հետևյալ միտումները.

- Մասնագիտական տերմինները դուրս են մղվում համագիտական և ազգային նշույթավորում ունեցող բառերով:
- Հեռահաղորդակցական անգլերեն բառապաշարում նույնպես նկատվում է խոսակցական բառաշերտի լեզվաարտահայտչամիջոցների կիրառման միտում:

- Ընդհանուր առմամբ, տերմիններն ունեն անգլերեն գրական և խոսակցական լեզուներին մերձենալու միտումը:
- Կարևոր միտում է շարունակական գիտական, հեռահաղորդակցական տերմինների հոմանիշության զարգացումը, ինչպես նաև պարզեցումը, սեփական և փոխառյալ տերմինների զուգահեռ կիրառումը:
- Նկատվում է նաև բառերի և բառակապակցությունների փոխաբերական կիրառության միտում:

**Երկրորդ գլխի վերջին ենթագլխում**

«Միջմշակութային հեռահաղորդակցական կարողությունների ձևավորման և զարգացման կադրակարի արդյունավետության գիտափորձարարական հիմնավորումը», ներկայացվում են փորձարարական աշխատանքի փուլերը, ընթացքը, ամփոփվում և շարադրվում են հետազոտության արդյունքները:

Ներկայացվում են մասնագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցմանն ուղղված համացանցային խաղերը: Առաջադրանք է տրվում համատեղ ընտրել այնպիսի խաղեր, որոնք ավելի հարմար են քիմիական տերմիններ սովորելու համար: Առանձնացնել քերականական ուղղվածության խաղերը: Կարևորվում է ուսանողների ինքնուրույն աշխատելու կարողությունների ձեռք բերմանը նվիրված աշխատանքը:

Այդ առումով շեշտադրվում է էլեկտրոնային բառարաններից օգտվելու կարողությունների ձևավորումը: էլեկտրոնային բառարանների հետ աշխատանքի ընթացակարգերը նույնն են՝ որոշում են աշխատանքի նպատակը, մակարդակը, փոխհարաբերությունների դիմամիկան, տեխնոլոգիան, հիմնավորման ձևաչափը և ընթացակարգը:

Կարևորվում է հատկապես տրված տերմինով համացանցում տեքստ գտնելու և տրված տեքստում նորիմաստ բառեր թարգմանելու հնարների համադրության կարողությունների ձևավորումը:

Գիտափորձը տևել է 1 տարի, ուսանողները մասնակցել են մասնագիտական կողմնորոշման բառապաշարի զարգացմանը միտված երկու նախագծային աշխատանքի, փնտրել և գտել են Անգլիայի և Հայաստանի քիմիական արդյունաբերությանը վերաբերող երկու տեքստ, ընդգծել և առանձնացրել են դրանցում հեռահաղորդակցական և մասնագիտական կողմնորոշման տերմինները, պատրաստել են անգլերեն լեզվով զեկուցում և մասնակցել են երկու նախագծային աշխատանքի, որոնց ընթացքը և արդյունքները գրանցվել են ուսանողների անհատական էլեկտրոնային թղթապանակներում:

Միջմշակութային հեռահաղորդակցական կարողությունների ձևավորման անգլերենի ուսուցման մեթոդական համակարգի արդյունավետությունը ստուգելու համար 2010-2011թթ. գիտափորձ է անցկացվել Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի և նրա Վանաձորի մասնաճյուղի քիմիական ֆակուլտետներում: Նորագույն հեռահաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ մասնագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցման առանձնահատկությունները բացահայտելու և առաջադրվող մոդելի արդյունավետությունը հիմնավորելու համար անցկացվող գիտափորձին մասնակցել են ՀՊՃՀ-ի նշված ֆակուլտետների 83 ուսանող՝ 43 ուսանող փորձարարական խմբում և 40 ուսանող ստուգողական խմբերում:



Գիտափորձի նպատակն էր հաստատել մշակված հեռահաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ մասնագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցման կադապարի արդյունավետությունը՝ փորձարարական և ստուգողական խմբերում ուսանողների հեռաղորդակցական կարողությունների համեմատության միջոցով :


Գիտափորձի սկզբում և վերջում բացահատվել և գնահատվել են քիմիական ֆակուլտետի ուսանողների աղյուսակում նշված կարողությունները:

Նշված կարողությունները գնահատվել են՝ հաշվի առնելով տվյալ խմբի ցույց տված միջին արդյունքները: Ուսանողների միջնաչափային հեռահաղորդակցական կարողությունները գնահատվում են քսան բալանոց համակարգով:

**Փորձարարական եվ ստուգողական խմբերի ցույց տված արդյունքների ամփոփիչ աղյուսակ 1.**

Կարողություններ	Փորձարարական խումբ N – 43		Ստուգողական խումբ N – 40	
	Գիտափորձի սկզբում	Գիտափորձի վերջում	Գիտափորձի սկզբում	Գիտափորձի վերջում
1. ստեղծել սեփական ռեսուրս-աշխատամիջոցները՝ բլոգները /անհատական ինտերնետային օրագրերը/	11	17	12	14
2.օգտվել փողքաթերմերից կամ թվային լրատվամիջոցների էլեկտրոնային ցանցային հեռարձակումից	9	15	8	12
3.ընդհանուր պատկերացում ունենալ և օգտվել wiki տեխնոլոգիայից	10	17	9	11
4.ստեղծել մասնագիտական ուղղվածության կայքէջեր	6	10	5	7
5.անգլերեն լեզվով հաղորդակցվել էլեկտրոնային փոստով (e-mail)	12	17	11	13
6. վարել համացանցային զրույցներ (chats) կենցաղային բնույթի թեմաների շուրջ	9	14	8	13
7.վարել համացանցային զրույցներ (chats) մասնագիտական բնույթի թեմաների շուրջ	6	15	5	8
8.փնտրել և գտնել համապատասխան տեղեկատվություն տրված թեմայով	12	18	13	16

9. օգտվել էլեկտրոնային և համացանցային բառարաններից տվյալ բառը, տերմինը կամ գիտական հասկացույթը համապատասխան զուգորդական դաշտում գտնելու նպատակով	9	17	8	13
10. մասնակցել նախագծային աշխատանքի հեռահաղորդակցական նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ	6	16	7	8
11. պատրաստել զեկուցում, ռեֆերատ, կուրսային աշխատանք՝ կիրառելով հեռահաղորդակցական նորագույն տեխնոլոգիաներ	9	17	8	11



Ստուգողական և փորձարարական խմբերի դրսևորած արդյունքերի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ փորձարարական խմբում ուսանողների հեռահաղորդակցական կարողությունների զարգացման գործընթացն ավելի արագ և արդյունավետ է ընթանում:

Մեկական ռեսուրս-աշխատամիջոցները ստեղծելու կարողությունը տեխնիկական բուհի ուսանողների շրջանում բավականին լավ է զարգացած, երբ խոսք է գնում տեխնիկական, մասնագիտական տեքստերի հետ աշխատելու մասին, սակայն անգլերենի ուսուցումը պահանջում է պատրաստվածության այլ աստիճան: Նրանք, լավ ծանոթ լինելով տեղեկատվական-համակարգչային տերմիններին, պետք է նաև զուգակցեն այդ գիտելիքները մասնագիտական կողմնորոշման անգլերենի լեզվանյութի նվազագույն իմացության հետ: Փաստորեն, այստեղ խոսք է գնում ոչ միայն գիտելիքների, այլև հեռահաղորդակցական տեխնոլոգիաներից օգտվելու հմտությունների մասին: Միայն բլոգներում կամ անհատական ինտերնետային օրագրերում օտարալեզու լեզվանյութի շարունակական կիրառումը կարող է զարգացնել ուսանողների միջմշակութային հեռահաղորդակցական

կարողությունները: Դրանց զարգացման երկրորդ կարևոր պայմանը մի տեխնոլոգիայի համակարգված համադրումն է մյուսների հետ:

Փողքասթերներից կամ թվային լրատվամիջոցների էլեկտրոնային ցանցային հեռարձակումից օգտվելու կարողությունը ավելի զարգացած է փորձարարական խմբի ուսանողների մոտ, քանի որ նրանք պատրաստել են զեկուցումներ և ներկայացրել համապատասխան տեղեկատվություն տվյալ տեխնոլոգիայի մասին անգլերեն լեզվով: Հաջորդ փուլում նրանք տեքստեր են փնտրում տրված թեմայով:

Ինչ վերաբերում է վիկի տեխնոլոգիաների կիրառմանը, երբ ուսանողները կարող են խմբագրել համացանցային էջեր, ապա մի կողմից ուսանողներից պահանջվում են հատուկ մասնագիտական գիտելիքներ, մյուս կողմից՝ սովորույթ: Մի տարում այդպիսի սովորույթ ձևավորել շատ դժվար է, սակայն, արդյունավետ հնար է ուսուցման նախնական շրջանում, երբ ուսանողները խմբագրում են իրենց դասընկերների վիկիները: Ուսուցման հաջորդ փուլում, նրանք փորձում են խմբագրել տարբեր վիկիներ, իհարկե, անգլերեն:

Մասնագիտական ուղղվածության կայքէջեր ստեղծելու կարողությունը նույնպես կարելի է զարգացնել, երբ ուսանողներն ունեն օտար լեզու սովորելու հստակ դրդապատճառ, հավասարապես տիրապետում են մյուս տեխնոլոգիաների կիրառման, մասնագիտական լեզվին: Թվում է, թե բոլոր ուսանողները հեշտությամբ հաղորդակցվում են էլեկտրոնային փոստով (e-mail), սակայն սա այն դեպքն է, երբ մասնագիտական կողմնորոշման անգլերենի իմացությունը նպաստում է տվյալ տեխնոլոգիայի կիրառմանը:

Կենցաղային բնույթի թեմաներով գրույց վարելու կարողությունը փորձարարական և ստուգողական խմբերում զարգանում է համարյա նույն տեմպերով: Սակայն մասնագիտական մակարդակում նշված խմբերի ցույց տված արդյունքները տարբերվում են, քանի որ փորձարարական մակարդակում նախօրոք ներմուծվում են ոչ միայն մասնագիտական կոմնորոշման բառապաշար, այլև համապատասխան նախագծեր, որոնց իրացումը զարգացնում է ուսանողների քննադատական մտածողությունը և գիտական ռեֆլեքսիայի մակարդակը:

Էլեկտրոնային և համացանցային բառարանների՝ նախօրոք պատրաստած ցանկը փորձարարական խմբի ուսանողներին առավելություն է տալիս ուսուցման բոլոր փուլերում: Կարևոր է նաև այն, որ ուսանողները փորձում են գտնել ոչ միայն գիտական տերմինի բացատրությունը, այլև դրա հոմանիշները և հականիշները, անկախ այն բանից, թե դրանք ինչ ոճի են պատկանում:

Նախագծային աշխատանքի արդյունավետությունը հիմնավորվում է նախ և առաջ այն բանով, որ ցույց է տալիս ուսանողների կարողությունների զարգացման աստիճանը թե՛ լեզվական գիտելիքների, թե՛ հեռահաղորդակցական նորագույն տեխնոլոգիաների կիրառման մակարդակում:

## Եզրակացություն

1. Արդի փուլում օրեցօր աճում է միջնակուսային հաղորդակցության դերը, որը ենթադրում է շփման կադապարների ինացություն, մշակութային կարծրատիպերի, արժեքային կողմնորոշիչների, մշակույթի պատկերների և խորհրդանիշերի, նորագույն հեռահաղորդակցական տեխնոլոգիաների կիրառում:

2. Տեխնիկական բնագրերն ավելի հավաստի են, դրանք դժվարությամբ են մշակվում ծավալի կրճատմամբ և դրանք ընթերցելու համար անհրաժեշտ են ոչ միայն ընդհանուր ֆոնային, այլև կոնկրետ մասնագիտական գիտելիքներ:

3. Հեռահաղորդակցական տեխնոլոգիաներով ներմուծվող, ուսուցանվող մասնագիտական կողմնորոշման տեքստերը աչքի են ընկնում իրենց բովանդակային և գործառական բնութագրերով: Դրանք կարող են լինել համագիտական, մասնագիտական, նեղ մասնագիտական: Մասնագիտական կողմնորոշման տեքստերը ներկայացնում են տարբեր նշանային համակարգեր, որոնց յուրացումը նպաստում է ապագա ճարտարագետների հեռահաղորդակցական իրազեկության զարգացմանը:

4. Հեռահաղորդակցական տեխնոլոգիաներով ուսուցման առավելություններից մեկն այն է, որ տեքստերում տեղեկատվությունը ներկայացվում է թե՛ մասնագիտական, գիտական տեքստերի, թե՛ խոսքային և ոչ խոսքային /պատկերների, նկարների, լուսաբանումների/ նշանների միջոցով:

5. Մասնագիտական կողմնորոշման, հեռահաղորդակցական բառապաշարն ընտրելիս հարկ է հաշվի առնել ոչ միայն անգլերեն լեզվում տվյալ ոլորտին վերաբերող հասկացությունները և գերհասկացությունները, այլև դրանց այն հայերեն համարժեքները, որոնք գործածվում են առօրյա-խոսակցական և պաշտոնական-գործարարական ոճերում: Դա կարևոր է, քանի որ գործաբանական բնույթի փոխներթափանցումը հնարավոր է հաղթահարել, երբ ուսանողները ծանոթանում են և՛ իրենց, և՛ լեզվակիրների ազգամշակութային կարծրատիպերին:

6. Համակարգչային բառապաշարն աչքի է ընկնում իր ոճաժանրային առանձնահատկություններով: Այն մի կողմից կապված է համակարգչային տեխնիկայի զարգացման հետ, մյուս կողմից ծնավորվում է համացանցի զարգացման տրամաբանությամբ: Հիմնական միտումն այն է, որ չեզոք համարվող տերմինները աստիճանաբար մտնում են առօրյա-խոսակցական բառապաշար, երբեմն վերածվում սլենգի կամ ծածկալեզվի:

7. Նպատակահարմար է հեռահաղորդակցական տերմինների ուսուցումն իրականացնել խառը կամ կրեոլ տեքստերի միջոցով, երբ ամեն մի տերմին տրվում է նկարով, գծապատկերով, կամ եթե հնարավոր է անգլերեն լեզվով հնչող տեսահոլովակով: Արդյունավետ է, երբ ուսանողները համացանցում ինքնուրույնաբար գտնում են մասնագիտական բնույթի տարբեր ֆիլմեր, նկարազարդ ուղեցույցներ, մասնագիտական տեքստեր և պատրաստում են ներկայացումներ, զեկույցներ, ֆիլմերի դիտումներ:

8. Տեխնիկական բուհի ուսանողները սիրով են ներգրավվում հետազոտական աշխատանքի մեջ: Արդյունավետ է այն, ինչ տեղի է ունենում անգլերենի ուսուցման ինտեգրատիվ մակարդակում, քանի որ ուսանողները մի կողմից յուրացնում են հեռահաղորդակցական, համակարգչային տերմինները, մյուս կողմից՝ մասնագիտական կողմնորոշման բառապաշարը:

9. Հեռահաղորդակցական կարողությունների գնահատման և ինքնագնահատման կարևոր և արդյունավետ գործիք է էլեկտրոնային թղթապանակը, որի միջոցով դասավանդողը կարողանում է վերլուծել մեծ քանակությամբ տեղեկատվություն:

Ատենախոսության **հիմնական դրույթներն** արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ աշխատանքներում.

1. Ա. Ս. Ղազարյան, Միջմշակութային հեռահաղորդակցական կարողությունների ձևավորումը անգլերենի մասնագիտական կողմնորոշման դասընթացում: «ԲԱՆԲԵՐ» Գիտական աշխատություններ, Վանաձոր 2008 թ., էջ 321-324:

2. Ա. Ս. Ղազարյան, Հեռահաղորդակցական նախագծերի կիրառումը մասնագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցման գործընթացում: «Մանկավարժական միտք» գիտամեթոդական ամսագիր, №1-2, Երևան 2009թ., էջ 131-135:

3. Ա. Ս. Ղազարյան, Հեռահաղորդակցական նախագծերը որպես ապագա ճարտարագետների սոցիալ-մշակութային իրազեկության զարգացման միջոց: «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, №2, Վանաձոր, 2009թ., էջ 182-185:

4. Ա. Ս. Ղազարյան, Բնագրային տեքստերի ընտրության հիմնախնդիրը անգլերենի մասնագիտական կողմնորոշման հեռահաղորդակցական դասընթացում: «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, №10-12, Վանաձոր, 2012թ., էջ 76-79:

#### **КАЗАРЯН АРМЕНИУИ СЕРИКОВНА**

#### **ФОРМИРОВАНИЕ МЕЖКУЛЬТУРНЫХ ТЕЛЕКОММУНИКАТИВНЫХ УМЕНИЙ В ПРОФЕССИОНАЛЬНО- ОРИЕНТИРОВАННОМ КУРСЕ АНГЛИЙСКОГО ЯЗЫКА**

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 - "Методика преподавания и воспитания" (английский язык)".

Защита состоится 21-го ноября 2014. в 14<sup>00</sup> ч. на заседании специализированного совета педагогики 065 ВАК по присуждению ученой степени при Ереванском государственном университете, по адресу: 0025, г. Ереван, ул. Х. Абовяна 52а, ЕГУ, корпус факультета армянкой филологии, аудитория 203.

## РЕЗЮМЕ

**Актуальность исследования.** В техническом вузе английский язык преподается два года, один раз в неделю. Учебно-методическая литература не соответствует современным требованиям лингводидактики и методики преподавания иностранных языков, используемые учебники не созданы в основном отечественными авторами, то есть не созданы с учетом особенностей студентов, говорящих на армянском языке. В целом обучение иностранным языкам осуществляется при отсутствии языковой среды, типичной для носителей языка. Использование телекоммуникативных средств компенсирует этот пробел, нехватка учебных часов.

Последовательное применение телекоммуникативных технологий способствует развитию умений и навыков межкультурного общения у студентов, развивает их моральные, волевые качества, прививает любовь и уважение к людям, имеющим разные вероисповедания, социальный статус, возраст, национальность и т.д. Межкультурная коммуникация с использованием телекоммуникативных технологий помогает студентам проявить толерантное отношение к близким и иностранцам.

В образовательном пространстве РА в основном не осуществлены исследования, посвященные к проблеме обучения профессионально-ориентированному английскому языку в техническом вузе посредством телекоммуникативных технологий. В этом контексте еще раз подчеркивается значение данного исследования.

**Целью исследования** является выявление особенностей обучения профессионально-ориентированному английскому языку в техническом вузе посредством телекоммуникативных технологий, и разработать с учетом данных технологий стратегию и методическую систему развития межкультурной коммуникативной компетенции у студентов.

### **Задачи исследования**

- Изучить методическую литературу вопроса.
- Раскрыть содержательные и функциональные характеристики межкультурной коммуникации и различных дискурсов.
- Сравнить психолого-педагогические условия формирования вербальной и невербальной коммуникации и разработать соответствующую стратегию продолжительного внедрения современных телекоммуникативных технологий.
- Создать оптимальную модель обучения профессионально-ориентированному английскому языку в техническом вузе посредством телекоммуникативных технологий и обосновать методическую систему формирования умений и навыков межкультурной телекоммуникации.

**Содержание исследования** отражено в структуре диссертации, которая состоит из введения 2 глав, заключения, библиографии и приложений.

**Научная новизна исследования** заключается в том, что выявлены особенности применения телекоммуникативных технологий и разработана методическая система формирования и развития телекоммуникативной компетенции в профессионально-ориентированном курсе английского языка, согласно которому проектный метод играет решающую роль в системе интерактивного обучения английскому языку.

### **Теоретическое значение исследования**

В рамках индивидуальных и групповых проектов представлена модель обучения английскому языку посредством электронных и телекоммуникативных технологий. Обоснована обучающая модель работы с разными телекоммуникативными дискурсами. Создана методическая система обучения английскому языку посредством телекоммуникативных технологий.

### **Практическое значение исследования**

Результаты исследования могут стать основой отбора виртуальных, аутентичных текстов и системы упражнений, предназначенных для работы с ними, а также для создания вузовских учебников, учебно-методических пособий, для организации новых курсов и создания программ, уроков, для планирования и проведения уроков по обучению английскому языку.

### **Апробация результатов исследования.**

Основные результаты исследования обсуждались на заседаниях кафедры методики преподавания иностранных языков в АГПУ им. Х. Абовяна. В результате проведенного эксперимента на факультетах ГИУА/Политехник/получены данные об эффективности применения предложенной модели. Материалы исследования внедрены в практику преподавания английского языка на факультетах химии и экономики в технических вузах .

По теме диссертации опубликованы четыре научные статьи.

GHAZARYAN AREMENUHI SERIK

## THE BUILDING OF INTERCULTURAL TELECOMMUNICATIVE SKILLS IN THE PROFESSIONALLY-ORIENTED COURSE OF ENGLISH

### **Summary**

#### **The relevance of the research.**

In a technical university English is taught two years, once a week. Educational literature does not meet the modern requirements of didactics and methodology of teaching foreign languages; textbooks are not created mainly by domestic authors. The students' needs, interests and motives are not taken into account and foreign language is taught in the absence of language environment. Using telecommunicative technologies for teaching/learning purposes can compensate this gap, as well as the shortage of training hours.

The application of telecommunicative technologies promotes students' intercultural habits and skills, develops their determination, and cultivates respect for people with different beliefs, social status, age, nationality, etc. Intercultural communication with telecommunicative technologies helps students to take a more tolerant attitude towards people both local and foreign.

In the educational sphere of the RA fundamental researches have not been carried out, along the lines of professionally-oriented English teaching at a

technical college by applying telecommunicative technologies. In this context the importance of the research leaves no room for doubt.

**The aim of the research** is to determine the main characteristics of professionally-oriented English teaching at a technical college by using telecommunicative technologies and to develop these technologies, as well as work out a methodological system of developing the students' cross-cultural communicative competence.

**The objectives of the research are:**

- to study the methodological literature on teaching/learning professionally-oriented English.
- to compare the psychological-pedagogical conditions of verbal and nonverbal communication, and to develop an appropriate strategy for an intensive use of modern telecommunicative technologies.
- to create an optimal model of professionally-oriented English teaching at a technical college by using telecommunicative technologies and work out a methodological system to justify the skill building of intercultural telecommunication.

**The content of the research** is reflected in the structure of the present paper, which consists of an introduction, three chapters, a conclusion, a bibliography and appendices.

**The scientific innovation of the research** consists in revealing the main characteristics of applying telecommunicative technologies and developing a methodological system of building telecommunicative competence in the professionally-oriented course of English, according to which the method of project plays a crucial role in the interactive English teaching.

**The theoretical value of the research.**

It represents an English teaching model through electronic and telecommunicative technologies and proves the teaching model to work with different telecommunicative discourses. A methodological system of teaching English through telecommunicative technologies has been created.

**The practical value of the research.**

The results can be used in the selection of virtual, authentic texts and designing system of exercises to work with students, as well as to create university textbooks, and organize new courses, programs to be carried out in professionally-oriented courses of English.

**The approbation of the research.**

The main results of the research have been discussed at the session of the chair of Foreign Language Methodology ASPU after Kh. Abovyan. As a result of experiment carried out at the Department of SEUA/Polytechnic/, data have been obtained about the effectiveness of the proposed model. The research materials of teaching professionally-oriented English through telecommunicative technologies have already been implemented into practice in technical universities of Armenia.









